№ 41. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 (ՆՈՅԵՄԲԵՐԻ 9) 1876 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 (ՆՈՅԵՄԲԵՐԻ 9) № 41.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարվանը 3 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արասխանեանի խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ„

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը խնդրում է նոցա, որք դեռ չեն վճարել „ՄՇԱԿԻ“ ներկայ տարվայ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, շուտով հասցնել նրան խմբագրութեանը։

Հասցէն՝ Тифлисъ, редакція армянск. газеты «Мшакъ».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այժմ ինչ պէտք է անեն հայերը։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Ներքին-Ագուլիսից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Ընդհանուր ժողով։ Վերջին լուրերը պատերազմական բեմից։ Իտալիա։ Նամակ Վանից։ Նամակ Եւրոպայից։ Նամակ Բինկանից։ — Խառն լուրեր։ — Յայտարարութիւններ։

ԱՅԺՄ ԻՆՉ ՊԷՏՔ Է ԱՆԵՆ ՀԱՅԵՐԸ

—

Ընթերցողը կը կարդայ „Մշակի“ ներկայ համարի „Արտաքին տեսութեան“ մէջ, որ Թիւրքիայի և Սերբիայի մէջ յայտնված է երկու ամսվայ զինադադարութիւն։ Մի և նոյն ժամանակ այս համարի մէջ տպված բազմաթիւ նամակներից ընթերցողը կը ծանօթանայ այն թշուառ, անտանելի դրութեան հետ, որի մէջ գտնվում են հայերը Թիւրքիայում, մանաւանդ այդ պետութեան ասիական նահանգներում։

Ինչպէս ամեն անհատի իրաւունքն ու պարտաւորութիւն է իր անձը պաշտպանելու, այնպէս էլ մի ազգի անբռնաբարելի իրաւունքն է իրան պաշտպանելու ընդդէմ ձնշող, ոչնչացնող այժերի։

Արդեօք այդ կարճ զինադադարումից յետոյ Նորից կը ծագի պատերազմ... և դուցէ աւելի սաստիկ եւրոպական պատերազմ, թէ այդ զինադադարումն կը վերջանայ խաղաղութեամբ, որի պայմանները կորոշվեն եւրոպական ընդհանուր կօնգրէսի մէջ,— յայտնի չէ, և ոչ ոք չէ կարող նախադուշակել։

Բայց ինչպէս և վերջանայ զինադադարումն, հայերը պէտք է ամեն բանին պատրաստ լինեն....

Եթէ Թիւրքիայի հայերը պատրաստ չեն, հասած չեն այն դրութեանը, որ զէնքով պաշտպանեն իրանց իրաւունքները, թող չը մոռանան, թող լաւ հասկանան, որ այսօր, այդ երկու ամսվայ ընթացքում, ամենայարմար ժամանակն է խաղաղ ճանապարհով պահանջել իրանց համար ամենաանհրաժեշտ մարդկային իրաւունքները, ամենայարմար միջոց է դիպլոմատական ճանապարհով իրանց ճնշված, թշուառ, անտանելի դրութեան մասին լսել տալ եւրոպային, ներկայացնել իրանց դրութեան ճիշդ նկարագիրը լինելու եւրոպական կօնգրէսին և պահանջել այն իրաւունքները, որոնցից մինչև այժմ զուրկ են մնացել շնորհով իրանց տգէտ և գործին անպատրաստ առաջնորդների։

Հայերը իրանց դրութեան ճիշդ նկարագիրը եւրոպական դիպլոմատիային ներկայացնելուց յետոյ, գլխաւորապէս երկու բան պէտք է պահանջեն Թիւրքիայից՝ նախ գաւառային կառավարչական ինքնավարութիւնը և երկրորդ, որ ամենագլխաւորն է, զէնք կրելու, զինաւորված լինելու, ամեն գաւառներում սեփական, իրանց միջից կազմված պահական զօրք պահելու իրաւունքը։

Մնացած իրաւունքները և նրանց գործադրութիւնը հետզհետէ կը գան....

Այդ տեսակ ծանր, նշանաւոր բոպէում, հայերը պէտք է մոռանան իրանց ներքին կուսակցական անհամաձայնութիւնները, կրօնական ապարդիւն վէճերը, ներքին երկպառակութիւնները և պէտք է ընդհանուր օգուտների համար միաբանութեամբ, ձեռք ձեռքի տուած գործեն։ Հայ-լուսաւորչական և հայ-կաթոլիկ, հասունեան, հակահասունեան և հայ-բողոքական, ժողովուրդ և կղեր,—բոլորը պիտի մոռանան իրանց դարդակ, ապարդիւն վէճերը, հայեացքների և համոզմունքների տարբերութիւնները և յիշեն միայն մի բան,— այն է որ բոլորն էլ կազմում են մի ազգութիւն, որի բոլոր անդամների պահանջները և օգուտները մի են....

Աւելորդ չենք համարում յայտնել այստեղ այն ուրախալի լուրը, որ վերջապէս Կ. Պոլսի հայերը, ինչպէս մեզ հաղորդում են մասնաւոր նամակով, լաւ հասկանալով թէ միաբանվելով նոցա ձայնը կշռի պիտի ունենայ եւրոպական դիպլոմատիայի մէջ, մոռանալով իրանց ապարդիւն երկպառակութիւնները՝ միացել են այժմ և միասին են գործում, ներկայանալով եւրոպայի առջև որպէս Թիւրքիահպատակ ամբողջ հայ ազգի ներկայացուցիչներ.... Ասում են որ այս բոպէիս Կ. Պոլսի բազմաթիւ հայ հասարակութիւնը մի հրաշալի, չեղած տեսարան է ներկայացնում՝ ժողովրդական շարժման մէջ, որի նպատակն է ներկայացնել եւրոպային հայերի անտանելի դրութիւնը և պահանջել իրաւունքները, մասնակցում են անխտիր հայ-լուսաւորչականները, հայ-կաթոլիկները և հայ-բողոքականները... ժողովուրդը և հոգևորականութիւնը ձեռք ձեռքի տուած է ընթանում...

Եթէ կը տևի այդ տեսակ միաբանութիւնը, ընդհանուր օգուտների այդ տեսակ խելացի հասկացողութիւնը,—կարելի է հաւատացած լինել որ և հայերի ձայնը կը լսվի եւրոպական ընդհանուր կօնգրէսի մէջ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

—

Հոկտեմբերի 17

Մոսկվայում հասարակական կարծիքը այնպէս է զբաղուած Արեւելեան հարցով և Բալկանի Սլավոնացոց ազատութեան հարցով, որ ամեն շրջանում—թէ ուսանողաց, թէ առևտրականների և ծառայողների—միշտ այս մասին են խօսում. ամեն տեղ կը լսէք մի բան «ազատութիւն մեր Սլավոնացի եղբայրներին։» Ամեն տեղ կը տեսնէք ծերեր, օրիորդներ և երիտասարդներ, որոնք կընքած մի փոքր մնդուկ շնչներին քաշարած և խաչաձև մի կարմիր կտոր թեներին կապած փող են ժողովում յօգուտ իրենց ճնշուած եղբայրներին։ Հասարակութիւնը անտրտունջ ու առատաբար զոհաբերութիւններ է անում։ Մոսկվայի ուսանողները յետ չը մնալով հասարակութիւնից այս քանի օրս ժողովեցին մօտ 500 ր. և ուղարկեցին Սերբիա։ Ամեն շաբաթ այստեղից յօժարակամ զինուորներ են գնում դէպի Սերբիա։

Պատիւ այսպիսի հասարակութեանը և երիտասարդներին, որոնք ոչինչ չեն խնայում իրենց ազգակիցների համար։

Իսկ մեր հայերը... Տաճկաստանի սովի ժամանակը մեր եղբայրները մեզանից այն օգնութիւնը չը ստացան, որը կարելի էր սպասել։ Ցանկալի է, որ գոնէ այժմ հետևելով ռուսաց օրինակին մենք ևս օգնէինք Անատոլիայի կոտորված հայերի ընտանիքներին, որոնք զրկվելով անից տեղից ձմռվայ սաստիկ ցրտերին պէտք է թափառեն և սովամահ լինեն։ Մթթէ այժմ էլ չը պէտք է օգնենք մեր եղբայրներին, որոնց կայքը յափշտակված է և ընտանեաց պատիւը խայտառակած....

Տաճիկների բարբարոսական վարմունքը Երզրումի և Անատոլիայի հայերի հետ, Մոսկվայի հայ ուսանողների վերա շատ վատ տպաւորութիւն ունեցաւ։ Ուսանողները օրերիս ստորագրութիւն բաց արին յօգուտ Տաճկաստանի ճնշուած հայերի։ Բոլորեքանք, թէ ուսանողները և թէ քանի առանձին մարդիկ ուրախութեամբ ընդունեցին ստորագրութիւնը, որը շարունակվում է։ Ուսանողները առատութեամբ են զոհաբերութիւն անում։ Առ-ժամանակ միայն մի համալսարանի ուսանող, երբ ստորագրութեան թերթը առաջարկեցին, իւր թիֆլիսի կոպիա բարբառով ասեց «Տօ բան չունիք, փուղ վուրտեանց բերիմ։» Համալսարանում էլ այսպիսի եսական կայ.... Տեսնենք ինչպէս կընդունեն միւս բարձր ուսումնարանների ուսանողները, այստեղի վաճառականները և առհասարակ մնացած հասարակութիւնը... Կաշխատենք այս մասին ճիշտ տեղեկութիւններ տալ մեր ընթերցողներին։

Մենք շատ ենք լսել, ինչպէս օտար ազգերը հայերին պախարակելով խաբեբայ վաճառականներ են անուանում. խոստովանվում ենք որ մենք ևս համոզված էինք այս բանում։ Բայց երբ Մոսկվա եկանք ու ծանօթացանք այստեղի վաճառականների հետ, համոզվեցանք որ և ռուս վաճառականներից շատերը պակաս չեն հայերից։ Նոքա այնպիսի թանգ գներ են նշանակում իրանց ապրանքներին, որ հայերը և մինչև անդամ հրէաները չեն անի։

Այս քանի օրերումս գնացինք ընկերների հետ մուշտակներ գնելու, մտանք մի մագազին։ Առաջ մեր վեր առած մուշտակին, որը ենօտի մորթից էր, 150 ր. գին նշանակեցին. բայց յետոյ երբ ուզում էինք դուրս գնալ, սկսեցին կամաց կամաց գինը պակասեցնել։ Ինչ էք կարծում, ընթերցող, ինչքան....

Այդ մուշտակը մեզ տալիս էին 25 ր.։ Լաւնայեցինք և տեսանք որ ներկած չան մորթից էր մուշտակը։ Չը կարողացանք արհամարանքներս զսպել ու այդտեղից գնացինք մի ուրիշ տեղ. մի և նոյն էլ այստեղ եղաւ։ Միով բանիւ ամբողջ Никольская փողոցը, որտեղ կենդրօնացած են բոլոր այսպիսի առևտրականները, անցանք և չը գտանք մի այսպիսի տեղ, որտեղ իսկ գինը ուղէին։ Վերջը առանց մուշտակ գնելու տուն եկանք։ Մեր ընկերներից մինը, այստեղի վաճառականների ընութեան հետ ծանօթ լինելով ուղարկեց մեզ Тверская փողոցը։ Ճշմարիտ է, այստեղ համեմատաբար աւելի արժան են գնահատում, բայց էլի երկու գին են նշանակում ապրանքը։ Այստեղի վաճառական դասի յատկութիւնները անհետանք չեն մնացել և մեր տեղոյս հայերի վերա։ Մի հայ այստեղ «chambres garnies» ունի։ Սա ճարպիկութիւնը հասցրել է վերին աստիճանի կատարելագործութեանը. ամեն մի սենեակը ամիսը պակաս երկու անդամ վարձով է տալիս։ Ահա ինչպէս. առաջ տալիս է մէկ մարդի, մի քանի օրից յետոյ մի պատճառ գտնելով սկսում է նեղացնել այնքան, որ նա ամիսը դեռ չը լրացած սենեակը թողնում է և փողը յետ չէ ստանում։ Յետոյ դալիս է մի ուրիշ բնակող, տանտէրը մի և նոյնն էլ այդ վերջինի հետ է անում։ Շաբաթ չէ անցնում, որ այս քաջ հայը ոստիկանութեան հետ կամ հաշտարար դատարանում գործ չունենայ։ Ահա ինչպէս մարդիք են հայոց պատիւ և յարգանքը վայր դցում։

Սօլօ

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

—

Հոկտեմբերի 10-ին

Ցիչենք մի առ մի Ներքին Ագուլիսի ուսումնարանի արդեանց աղբիւրները։

Առաջին, յօգուտ ուսումնարանի կան կտակուած հետևեալ անշարժ կայքերը. ա) հանգուցեալ Ցովսէփ Համբարձումեանցը կտակել է Զաքաթալայ քաղաքում ունեցած իւր մի կրպակը և գիւղումս ունեցած մի կտոր դետինը, որք կարժենան 400 ռուբ., բ.) հանգուցեալ Բալահայրումեանցի կինը թողել է յօգուտ ուսումնարանի իւր մի այգին, արժողութեամբ 300 ռուբ. և գ.) հանգուցեալ Շահհանցը կտակած էր յօգուտ ուսումնարանի իւր բոլոր անշարժ կայքերը, որ բաղկացած էին քանի մի այգիներից և մի ձեռք տներից, բայց կտակատարների և հոգաբարձուաց անհոգութեան և ժողովրդոց մէջ ծագած անմիաբանութեան պատճառաւ սորանցից յօգուտ ուսումնարանի մնաց միայն հանգուցեալի տունը և մի կտոր այգին, որոնք ծախուեցան աճուրդով։ Այս այգին ում վերա մնայ, փողն ով ստացաւ, կամ քանիսով ծախուեց ոչ ոք չը գիտէ, իսկ տան գինը աճուրդի ժամանակ բարձրացաւ մինչ 1000 ռուբ., սակայն չը գիտենք ինչ պատճառաւ այդ աճուրդի ժամանակ եղած վաճառումը չը կայանալով, հոգաբարձու Ո. Ո-ցը սեփականացրուց իրեն 800 մանէթով, թէև նոյնպէս յայտնի չէ փողն ով է ստացած կամ գոնէ մի հաշիւ կամ մի անդորրագիր կայ այդ մասին, թէ ոչ։ Ուրեմն հաշուելով միայն առ ձեռն եղածներն, յօգուտ ուսումնարանի կտակուած կայ 1500 մանէթի անշարժ կայք, որք տարեկան շահ կը բերեն առ նուազն 150 ռուբլի։

Երկրորդ, ժողովուրդը համաձայնութեամբ նուիրել է ուսումնարանին գիւղապատկան արօտատեղերից և հրապարակական կշռից ստանալիք արդիւնքը։ Արօտատեղերը տարեկան կը բերեն արդիւնք 150 ռուբլուց աւել, իսկ կշռաբ աճուրդով էր տրվում 100 մանէթի, ուրեմն այս կողմից ևս 250 ռուբ.։

Երրորդ, Նորին Վեհափառութիւնը համաձայն ժողովրդոց խնդրագրին թող է տուած յօգուտ ուսումնարանի զործադրել եկեղեցական արդիւնքը։ Եկեղեցւոյ տարեկան զանձանակներից, մոմավաճառութիւնից և ուրիշ նուիրատվութիւններից ստացած արդիւնքները դեռ թողնենք եկեղեցւոյն համար, չը հաշուենք նոյնպէս Ս. Սարգիս և Ս. Մինաս եկեղեցիների արդիւնքը։ Եկեղեցին ունի քանի մի հազար ռուբլ դրամագլուխ, բայց որովհետև կանոնաւոր հաշուատեսութիւն չը լինելու պատճառաւ նոյն իսկ եկեղեցական երեցփոխաններին ևս ճշգութեամբ յայտնի չէ դրամագլուխը, մենք թող հաշուենք առ այժմ 4000 ռուբլ, որ տարեկան տոկոս կը բերի այստեղ ամենապակասն 400 ռուբ., բացի այդ կան եկեղեցապատկան երկու այգիներ և մի երկու կտոր ցանքատեղեր, սորանցից ևս կը ստացուի 60 ռուբ., ուրեմն եկեղեցուց արդիւնք կը ստացուէր 460 ռուբլ։

Չորրորդ, եթէ այստեղ կանոնաւոր ուսումնարան լինի 100 աշակերտներ աւելորդութեամբ կը հաւաքուեն ուսանելու։ Այս թւից թող 20 աշակերտներ ձրիաբար ուսանեն, մնացեալներից կարելի է ստանալ թոշակ. 50 հոգւոյ համար թոշաք հաշուենք վեց վեց ռուբլ, որ կանի 300 ռուբ. և 30 հոգւոյ համար էլ 12 ռուբ. որ կանէ 360 ռուբ., ուրեմն աշակերտներից թոշակ կը ստացուէր 660 ռուբ.։

Եւ հինգերորդ, ինչպէս վերև յայտնեցի, ստորագրուած էին 31 հիմնադիրներ, սոքա կազմում էին 45 բաժիններ, իւրաքանչիւր բաժինը 100 ռուբլուց, որ է ընդ ամենը 4500 ռուբ., հիմնադիրները պարտաւորուած էին իրենց ստորագրած բաժինները թողնել իրենց մօտ և վճարել 10% տարեկան տոկոսը, որից կը գոյանար 450 ռուբ.։

Եւ ընդ ամենը ուսումնարանը տարեկան պիտի ունենար դուտ եկամուտ 1970 ռուբ.։

Հաշուենք այժմ հարկաւոր ծախքերը.

Ուսումնարանին բաւական էին երեք ուսուցիչներ, սոցա իւրաքանչիւրին ռոճիկ հաշուենք միջին թւով 400 ռուբ., բոլորին 1200 ռուբ.։ Պահապանի, վառելիքի և այլ մանր ծախքերի հաշիւ կը դնայ 100 ռուբ.։ Վարժապետաց համար ուսում-

նարանի չինութեան մէջ բնակարաններ կան, այնու ամենայնիւ այդ մասին ես աւելորդ ծախք հաշուենք 100 ռուբ.։ Բոլորը միասին ծախք դոյանում է հազիւ 1400 ռուբ.։

Այս հաշիւներին նայելով պէտք էր կարծել, որ էլ ոչինչ կասկած չը կար ուսումնարանի բացուելուն, որովհետև նորա գլխաւոր պահանջը աւելորդութեամբ հոգացուած էր և ինչպէս տեսնում է ընթերցողը, ծախքերն դուրս գալով տարեկան զուտ արդիւնք էլ պիտի յետ ձգէր 570 ռուբ.։ Բայց ահա օրինակ, որ ամեն ժամանակ դրամը չէ պատճառ որ և իցէ բարեգործութիւն կատարելու, այլ սորա համար պէտք է ամբոխը ինքը այն աստիճան զարգացած լինի, որ կարողանայ ըմբռնել իւր ձեռնարկութեան օգտակարութիւնը, որ կարողանա հասարակաց օգուտը վերադասել անձնական շահերից։

Երբ ուսումնարանին համար այսպէս ամենայն հոգացուած, կարգի ձգուած էր և էլ ոչինչ կասկած չը կար ամենակարճ միջոցում նորա բացուելուն, նոյն միջոցին վրա հասաւ մի անակնկալ դժբաղդ իրողութիւն։ Վարժապետի ընտրութեան համար հոգաբարձուներից Ա. Ն-ցի և Պ. Ա-ցի մէջ անհամաձայնութիւն ծագեց, որի պատճառաւ այդ, համարեա, գլուխ բերած ծրագիրը կրկին հիմնայատակ կործանուեցաւ, որովհետև այդ ծագած անհամաձայնութիւնը առիթ եղաւ և անմիջապէս ժողովրդի մէջ հազիւ մարած յուզմունքը կրկին անգամ վառուելու։ Գուցէ հնար լինէր հոգաբարձուների մէջ ծագած անհամաձայնութեան տեղի տալու յօգուտ այն կողմի, որին միանար երրորդ հոգաբարձու Ո. Ո-ցը, բայց դժբաղդաբար նա չը հասկանալով իւր պարտականութիւնը կանգնեց իբրև լրիւ հանդիսատես, որովհետև նա ոչինչ էլ չունէր այժմ ուսումնարանի հետ, նա արդէն հասել էր իւր ցանկացած նպատակին, իսկ իւր որդուոյ համար ուսում երբէք հարկաւոր չէ, ուսումը մարդուս խօ փող չի տալու...։

Եւ այս յուզմունքին հետևանքն եղաւ ուսումնարանի եկամուտների օդի մէջ ցնդիլը։ Հիմնադիր ստորագրվողներից որը բոլորովին հրաժարուեց իւր ստորագրութիւնից ինչ ինչ պատճառաւ, որը չը գիտէր ում և ինչ բանի համար ներկայացնի։ Ուսումնարանին կտակած կայքերը մնացին ոչով չը գիտէր ում ձեռին, ինչ դարձաւ հոգաբարձու Ո. Ո-ցի Նուխի քաղաքում գտնվող հիմնադիրներից 1873 թուականում ժողոված 8 բաժինների տարեկան տոկոսը, կամ թէ ով ստացաւ հոգաբարձուի օգնական Մ. Ռ-ցի Թիֆլիս գտնվողներից հաւաքած 6 բաժինների տոկոսը։ Ոչով չը գիտէ, վերջապէս, ովքեր են ստանում արօտատեղերի և կշռի արդիւնքը։ Միայն խստիւ հոգացվում են եկեղեցական արդիւնքը և հաւաքվում եկեղեցւոյ անյատակ կասսի մէջ, որովհետև նորանցմով պիտի պայծառացնեն եկեղեցին, որոյ պատճառաւ անօգուտ էլ չեն համարում գործադրել ամենայն միջոց, թէ կուզ լինէր հարստահարութիւն։

Եւ այսպէս քանի աղաների եսականութեան պատճառաւ՝ իրենց ծնողական հարազատ պարտականութիւնքն հակացող սակաւ անձինքն ևս զրկվում են իրենց սուրբ պարտականութիւնը կատարելու միջոցից։ Առաջի անգամ հոգևոր դրպրոցը փակուելուց սկսեալ սոցա բոլոր յոյսը կեդրոնանում է միայն ժամանակ ժամանակ երևացող մի երկու անչահասէր անձների վերա, որոնք, համարեա ձրի, յանձն են առնում այր ու բենը սովորեցնել ազգի թշուառ զաւակներին։ Խեղճ ծնողը թէև լաւ գիտէ՝ որ այդտեղից ոչինչ աւելի սպասելի չէ, այնու ամենայնիւ զրկում է իւր զաւակը նոցա մօտ, որպէս զի գոնէ նա ազատ մնայ այն դժբաղդ դիպուածներից, որ կարող է հանդիպել նորան դատարկաշրջիկ թափառելուց։ Սակայն այդ միակ միջոցին ևս սպառնում է մեր աղաների եսականութիւնը։

Եւ այս գործունէութեան տէր մարդիկ կամենում են, որ իրենց ընթացքի մասին ոչով չը խօսէ, չը գիտենալով որ եթէ մենք ևս լռենք քարեր պիտի աղաղակեն նոցա դէմ, մինչև չը հասկանան և չը կատարեն իրանց պարտականութիւնքը։

Գիւղացի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ախալքալաք. հոկտ. 16.

Պ. Խմբագիր։ Ռուս «Кругозоръ» օրագրի № 37 մէջ արտատպված էր ձեր լրագրից որ Ախալքալաքի չրջակայքում Թուրքերը սպանում են և կողոպտում խաղաղ քրիստոնեայ բնակիչներին։ Բոլորովին համաձայն լինելով այն կարծիքի հետ որ այստեղի Թուրք ազգաբնակութեան կողոպտելու ոգին և յանդգնութիւնը վերին աստիճանի է հասնում, ես ճշմարտութիւնը վերականգնեցնելու համար, պարտաւորութիւն եմ համարում յայտնել ձեզ որ այն ժամանակից երբ ես այստեղ քննիչ (սլեդովատել) եմ կարգված, այսինքն 1874 թվի սեպտեմբեր ամսից, Ախալքալաքում, փառք Աստուծու, ոչ մի սպանութիւն պատահած չէ, իսկ Ախալքալաքի գաւառում (ուեզդ) հետևեալ սպանութիւններ են կատարվել։ Անցեալ տարվայ յուլիս ամսի վերջերում Խանչալի գիւղի մօտ սպանված է մի կօզակ Դէմօչկա անունով, ներկայ թվի յունվարի 1-ին Ախալքալաքի մօտ անզգուշութեան պատճառով սպանված է եղել ունտեր-օֆիցէր Բաղուի գունդի, և յետոյ այս տարվայ յուլիս ամսին սպանվեցան երկու հայեր, մին Պօչի գիւղի մօտ, իսկ միւսը Բզավէտ գիւղում։ Ուրիշ դէպքեր սպանութեան, 1874 թվի սեպտեմբեր ամսից Ախալքալաքի գաւառում չը կային։

Ախալքալաքեան Քննիչ
Ն. Գէեվսկի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հրդեհները ԹԻՖԼԻՍՈՒՄ օրից օր չատանում են, իսկ հրաշէջ վարչութիւնը ոչինչ միջոցներ չունի կրակը հանգցնելու համար։ Նորերումս Նորաշէն եկեղեցու դիմաց Փուղինեանցի ատն հրդեհի ժամանակ հրաշէջ վարչութիւնը ուրիշ բան չէր անում, եթէ ոչ այն որ մեզանից, հանդիսականներից, ամեն մէկը անում էր—այն է անվրդով ոգով նայում էր, ինչպէս տները իրանց համար այրվում էին, և շատ շատ կարողանում էր քանդել հարևան տների մի քանի պատեր և փայտեայ բալկոններ։ Բաղդաւորապէս փուղինեանցի տունը դատարկ էր. նա ամբողջապէս այրվեցաւ։ Ասում են որ տունը ապահովված էր։

—

Գրիգոր Արծրունու ռուսերէն բրոշիւրը «Восточный Вопросъ» ուղարկեցինք մեծ քանակութեամբ Մոսկվա և Սանկտ-Պետերբուրգ կոմիսիայով ծախելու։ Մոսկվա Ն. Ի. Մամոնտով գրավաճառին՝ Кузнецкій мостъ, домъ Пирсанова, իսկ Սանկտ-Պետերբուրգ՝ Книжн. магаз. Фену и К-о по Фонтанкѣ въ зданіи Соляного городка.

—

Հոկտեմբերի 16-ին վերադարձաւ Սանդամիրից Թիֆլիս սրբ. Գաբրիել Ադվաղովկի։

—

ԳԱՆՁԱԿԻՑ գրումեն մեզ որ հոկտեմբերի 1-ին մուտ գործեց այդ քաղաքը սինոդական անդամ սրբազան Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեանց, որ Վեհափառի հրամանով, ինչպէս լսում է, ուղարկված է Արարատի բաղմակնճիռ խնդիրը լուծելու և ժողովրդի մէջ խաղաղութիւն դնելու համար։ Սրբազանը յաջորդարանի չինութեան բոլորովին անյարմար լինելուց ստիպված, վեր եկաւ պ. Ռ. Ափանասեանցի տանը.... Մի քանիներ ասում են որ սրբ. Մուշեղեանց այս անդամն էլ Արարատի գործի համար չէ եկած, վասն զի դալու օրից սկսած յաջորդական հարցն է արծարծում։ Մի հոգեհայի վրա ժողովուրդը խնդրում է տեղեկութիւն թէ «երբ կուղարկվի մեզ նոր յաջորդ և ով է նշանակվում.»—այդ հարցին սրբ. Մուշեղեանը պատասխանում է՝ «եղբայրներ. Գրիգոր վարդապետին ևս 26 տարի է որ ճանաչում եմ, միասին ենք կարդացել, և նրանից մի պակասութիւն չեմ տեսած, ինչով էք անբաւական նրանից, որ չէք ուզում նրան...»

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են՝ «Մեսրոպը եպիսկոպոս Սմբատեանց արդէն պատրաստած լինելով Հին-Նախիջևան քաղաքի և նրա հինգ գաւառների, այն է Շարուրի, Վայոց-ձորի, Զահուկի, Երնջանկի և Գողթնեաց ճիշդ և առանձին տեղագրութիւնը, դիտաւորութիւն ունի առաջիկայ 1877 թվին տպագրել տալ։ Այդ պատճառով նոքա, որոնք կը ցանկանան ունենալ այդ գիրքը, պէտք է չուտով յայտնեն իրանց կամքը, ուղարկելով մի բուրլ բաժանորդագին, վասն զի այնտանքի տպագրութիւնից յետոյ գինը կը բարձրանայ մինչև մի և կէս ռուբլ։ Հասցէն այս է՝ Въ Вагаршапатъ, Эрив. губ. Гавріилу Авраамовичу Сумбатянъ».

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Երեկ Ազգ. ժողով գումարուեցաւ ի Ղալաթիա ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Վսեմ. Ստեփան բաշայի։

Ատեանը բացուելուն տակաւին պատրաստ չէր հարստահարութեանց տեղեկագիրը, ուստի օրակարգին միւս խնդիրը որոշուեցաւ, այն է տրոց խնդիրն՝ ըստ առաջարկութեան Քաղ. Ժողովոյ։

Ասկէ ետքը եկաւ հարստահարութեանց յանձնաժողովն իր տեղեկագրովը, որու տեղեկաբերն էր Փափազեան Էֆէնտի։ Ատենապետ բաշա հրաւիրեց որ պատրաստուած տեղեկագիրը կարդայ. բեմն ելաւ Փափազեան էֆէնտի և պատրաստուած տեղեկագիրը կարդաց որ տևեց մէկ ու կէս ժամ։

Այս տեղեկագրին մէջ հազիւ մէկ երես կար որ յանձնաժողովոյն կարծիքը, այն է յառաջաբանն ու վերջաբանը պարունակէր, մնացած բոլորը հարստահարութեան դէպքեր էին. եկած ու գացած պաշտօնական դրութեանց օրինակներ իրենց թուականաւ և թուահամարաւ. ասոնց մէջ լսեցինք որ մինչև անգամ կայսերական իրատէով հրամայեալ որոշումներ պարզ տեղական պաշտօնեայ մը յաջողեր է ետ դարձնել և այդ իրատէին տեղ ուրիշ իրատէ մը հանել տալ։ Վարչութիւնը խնդրեր է եղեր որ հողային խնդիրը խառն մասնաժողովով կարգի դրուի, պետական խորհուրդը պատասխաներ է թէ պէտք է ցուցնել թէ ուր տեղ և որու հողը բռնաբարեալ է և բռնաբարողն ով է. վարչութիւնը ասոնց մէկ ցանկը պատրաստեր է, որու ընթերցումը տևեց 1/2 ժամ և որմէ հասկացուեցաւ թէ եթէ հայոց ազգը տակաւին կապրի՝ հրաշք մ'է այդ. որովհետև այդ ատելման բարբարոսութեանց տակ ապրիլ կարելի չէ։

Յետ ընթերցման սոյն տեղեկագրին ատենաբանութիւնք սկսան, ուր ընդդիմախօս գրեթէ չը կար, ժամ 10-ին տեղեկագրին եզրակացութիւնը քուէի դրուելով ընդունուեցաւ՝ որ էր սոյն տեղեկագիրը կցելով ամէն առջի հարստահարութեան տեղեկագրին, ներկայացնել Մեծ Եպարքոսին։ Ստեփան բաշա ալ առաջարկութիւն մը ներկայացուց, որով պարտք կը դնէր Ս. Պատրիարքին վրայ տեղեկագրին մատուցմամբը չը շատանալ, այլ շարունակել իւր միջնորդութիւնը մինչև որ ազգը իւր այսքան հարստահարութեանց տակ ցուցած դարաւոր հաւատարմութեան փոխարէն միւս հպատակ ազգաց հաւասար արժանաւոր դիրք մը վայելէ և ազգը մէկ ամիս շարունակ եկեղեցեաց մէջ աղօթէ և Աստուծոյ օգնութիւնը հանի։ Ժամանակն ուշ էր և սխալ հասկացողութիւն մ'ալ տեղի ունեցաւ թէ՝ Ստեփան բաշայի առաջարկութիւնը յանձնաժողովոյ առաջարկութեան մերժումն էր, մինչդեռ յաւելում մ'էր շատ հեռատեսութեամբ գրի առնուած, սակայն չը կրնալով լաւ մը բացատրուիլ, ատեանը գոցուեցաւ այդ քուէարկելը յաջորդ նիստին թողլով։

Արդ եթէ այս դարուս մէջ և 56-ի դաշնադրութեան տակ այդքան հարստահարութիւններ և պաշտօնական խաբէութիւններ տեղի ունեցեր է, հապա բարբարոսութեան անունը յայտնի կրող դարերուն մէջ ինչքա՞ր չէ եղեր արդեօք. թող կարդան այդ տեղեկագիրը և տեղական բարբարոսութիւն տեսնեն։

(Նորագիր)

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

Վերջին օրերը տխուր լուրեր են սկսել հասնել մեզ Սերբիայից։ Թուրքերը սկսել են սաստիկ ջարդել սերբական զօրքը, սերբացիները հեռացել են դէպի երկրի խորքը։ Խօրվատովիչ զօրապետի ոյժերը կենդրոնացած են Կրուշէվացի մէջ, սերբական գլխաւոր ոյժերը այժմ գտնվում են Դէլեդրադի մէջ։ Ռուս կամաւորները շարունակում են գալ Սերբիա։ Հոկտեմբերի 20-ին էլ 150 մարդ եկան Ռուսաստանից Կլադօվօ քաղաքը։ Թուրքաց զօրքը վերցրեց Ալէքսինաց և բոլորովին քանդեց այդ քաղաքը. նրան ռմբակոծելու ժամանակ Թուրքերը 2000 ռմբից աւելի են գցել Ալէքսինացի վրա։ Գեներալ Չերնիայեվի գլխաւոր բանակը գտնվում է Զուպրիի մէջ։—Ռուսաց տէրութիւնը հրամայեց իր ներկայացուցչին Կ. Պօլսում, գեներալ Իգնատիէվին, որ յայտնէ Թուրքաց տէրութեանը որ եթէ երկու օրվայ միջոցում Թուրքիան չը համաձայնվի ընդունել զինադադարման պայմանները, գեներալ Իգնատիէվ ամբողջ ռուսաց դեսպանատան հետ կը թողնէ Կ. Պօլիս և այնուհետև Թուրքիայի և Ռուսիայի մէջ դիպլոմատական յարաբերութիւնները կտրված պիտի համարվին։—Վերջին հեռագրական լուրերը հաղորդում են որ Թուրքիան ընդունեց Ռուսաստանից առաջարկված պայմանը, այն է երկու ամսվայ զինադադարումն, որ պիտի հաշվի նոյեմբերի 1-ից (հոկտեմբերի 20-ից)։—Վերջին հեռագրական լուրերը հաղորդում են, որ Սերբիայի մէջ իբր թէ տարաձայնութիւններ կային զինուորական և քաղաքական վարչութեան մէջ։ Սերբիայի ներքին գործերի մինիստրը պարապաւորութիւն համարեց յայտնել տէրութեան կողմից որ տարաձայնութեան լուրը սոյդ չէ և որ սերբական քաղաքական և զինուորական վարչութեան մէջ ոչինչ տարաձայնութիւն չը կայ։ Գեներալ Չերնիայեվ մինիստրի հաղորդութեանը պատասխանեց՝ իր բանակից՝ „ես բաւականացրած եմ։“—Հեռագրալուրից իմանում ենք որ Ռումինիան մեծ պատերազմական պատրաստութիւններ է տեսնում և զինաւորում է զօրքը։—Ասում են որ մի իտալացի բարձրաստիճան զինուորական սկսած է բանակցութիւններ սերբական տէրութեան հետ, որ կարողանայ կազմել սերբական զօրքի մէջ կամաւորների մի առանձին իտալական գունդ։ Ասում են որ արդէն 15,000 իտալական կամաւորներ կան, որոնք իրանց համաձայնութիւնը արդէն յայտնել են մասնակցել յիշեալ գունդի մէջ։

ԻՏԱԼԻԱ

Հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 6-ին) կարդցեալ Անտոնելլի, պապի արտաքին գործերի առաջվայ մինիստրը, վախճանվեցաւ։—Ընտրութիւնները իտալական ազգային-ժողովի համար վերջացան։ Պատգամաւորների բազմութիւնը պատկանում է այժմեան մինիստրութեան կուսակցութեանը։

ՆԱՄԱԿ ՎԱՆԻՑ

Հոկտեմբերի 6-ին 76.

Վասպուրականի ներկայ ազէտալի վիճակի մանրամասնութեանց նկարագիրն՝ աւելի կարող գրիչներուն թողլով, միայն քանի մի զլխաւոր դէպքեր ու անցքեր յիշելով ձեզ կը յղեմ. խնդրելով՝ հրատարակել ձեր շաբաթաթերթի միջոցաւ։

Հէյդարանցի յիսուն քիւրդ ձիաւոր, Պստիկ և Պէրկրի անուանեալ երկու հայ գիւղերու բոլոր ճամբաներն, երթևեկներէն արգելելով, պաշարման կենթարկեն յիշեալ գիւղք. ճիշդ այն պահուն երբ հովիւներ իրենց բոլոր հօտերով գիւղի բոլորտիքը հաւաքուած, պէրվոներուն (կովերը կթող կանայք և աղջկունք) կաթ կթիլ կը տային, յանկարծ այս վայրենեաց խումբն դէպի գիւղն կը խաղայ և իրենց գնդապետ Նշան տալով՝ կը ձայնէ սրերն ու թրերն մերկացնելու, գանակոծելու, բռնաբարելու և ունեցածնին կողոպտելու։

Այս նշանն ու ձայն բաւական էր երկու գիւղն աւարելու, ալ ով կը լսէր հայերի ձայն, և ում հոգ թշուառների լաց ու կոծ, ով մտիկ կը տար նախրորդն ու նախիրն, հօտն ու հովիւն, կաթն ու կաթամանն, որ իրենց ինչք և ստացուածք, գանձն ու յոյսն միակ նոքա են, որ յափշտակելով, գանակոծելով առին ու տարան. օրը կէս օր էր, երիք մարդիկ դաշտ էին, թշուառ ծերունիք միայն կը տեսնէին, միայն կողբայնն իրենց ընտանեաց պատիւը... Խեղճ, տանտիկին Մամիկն, կուլար, կաղերսէր՝ խնայել հարսների պատուոն, չառևանգել աղջիկների կուսութիւնն, չը մերկացնել, չը կողոպտել նոցա զարդն՝ ու հագած շորերը։ Բայց աւարողն իր աւար առաւ՝ ինչ որ տեսաւ ու գտաւ, և ինչ որ պիտանի էր՝ առաւ ու տարաւ։

Այս բարբարոսական անցքեր կատարուելէն մի օր վերջ, յիշեալ հէյդարանցոց ընդհանուր Էլաղասի, Ալի աղան, Կարինէն վերադառնալով յիշեալ գիւղն կիջնայ, որն որ Կարնոյ կուսակալէն կանչուած էր, իր Թոռան՝ իրեն դէմ բաց արած գանգատի մասին, բայց նա մի պարկ հետն առած, փոխարէն մի պատուանշան իր կուրծքէն կախ արած, վերադարձաւ ի նշան հաւատարիմ ծառայութեան, և ի միխիթարութիւն հայ գիւղացւոց։ Զը մոռանանք ասելու որ, յիշեալ գիւղերը վանէն 10 ժամ հեռի է. և նոյն տեղի հսկող գայմագամի ընակարանէն կէս ժամ հեռի, ճիշդ նրա աչքի ու քթի տակ կը կողոպտուի։

Տեղւոյս Միխթարիվ փաշան, որ մոլեռանդ մէկն է, սոյն դէպք լսելով, բնաւ մտիկ չը տուաւ, բայց գիւղացւոց բողոքներէն, ու կերած սեր ու պանիրէն պարտաւորեալ խոստացաւ, ութ կամ տաս ոստիկան յղել ձերբակալելու։ Միանգամայն, հրաւիրելով հանրածանօթ Պօղոս վ. յընկերակցութիւն ոստիկանաց։ Բայց նա մերժելով խնդիրն,—ու գանգատն սուսիկ փուսիկ վերջացաւ։

Այս մի ամիսն աւելի է, որ Վասպուրականի հայ գիւղացիներ յանիրաւի չարչարող, և խպառ փչացնող քիւրդերէն աւելի, օսմանեան զօրքերն են, մօտ 12 հազարի, որն որ չրջակայ գիւղօրէից վրա բաժանելով, ձրի կը կերակրուին, կուտեն, կը կողոպտեն և կառևանգեն, մէկ խօսքով ինչ որ իրենց կամքն ուզում է, պէտք է տրուի, ապա թէ ոչ, սուր ու հուր կիջնայ իրենց գլխին։ Կարնոյ կուսակալէն հրաման եկաւ Բայազէտ երթալու, իրենց կահ կարասեաց փոխադրութիւնը, դարձեալ հայ սելլորներուն վրին բարձին, նոցա կալն ու կուրին, թողելով ի մէջ դաշտին ու արտին։

Բայազիտցի բարեկամիս մի նամակը այսօր ինձ հասնելով, հետևեալ անցքը կը պատմէ։

Մի օր յառաջ քանի մի հազար օսմանեան զօրք Վանէն տեղս եկաւ, մեր կողմի վրանաբնակ քիւրդերը մօտալուտ պատերազմի մը նշան ճանաչելով, սրեցին թրերը, թամբեցին ձիերը, ու ելան չրջակայ գիւղեր ու վանքեր կողոպտելու։

Քաղաքէս երկու ժամ հեռի գտնուած, Իւշ-Քիլիսէ վանաց վանահօր Յովհաննէս վարդապետի վրին վերա փորձեցին իրենց սրած թուրը, գլխատելով զանի, ու վանքը բոլորովին կողոպտելով, մեկնեցան, բայց չը գիտեմ թէ ուր։

Բայազիտցի Սարգար աղան, փաշային թէև բողոքեց, որ տեղւոյս երևելիներէն մինն է, բայց անլսելի մնալով, մեկնեցաւ Ցիղիր և անկէ Էջմիածին գնալու ու բողոքելու։

Մեծ. խմբագիր, ահա այս համառօտ նկարագիրն ձեզ յղելով, խնդրամտցէք թէ որչափ ահ ու դողի մէջ են Վասպուրականի և բոլոր Հայաստանի հայերը Օսմանեան երկրում, ոչ մի ապահովութիւն չը կայ, թէ կենաց, թէ ինչից, և թէ ընտանեաց ու պատուոյ։ Ամեն օր մի նոր լուր, մի նոր դուժ կուգայ մեզ, կը հասնի տեղս։ Չը գիտեմ ինչ պիտի լինի մեր վիճակը, և մինչև երբ այս սարկական ոգին, այս վատարի դրութիւնն մեզ կաչկանդէ ու կապէ։

Արմէն

ՆԱՄԱԿ ԵՒԴՈԿԻԱՅԻՑ

Սեպտեմբեր 76.

Սամսոն քաղաքը զոր հիները Ամիսոն կանուանէին, մի վաճառաշահ քաղաք է։ Փոքր-Ասիա տարուելիք վաճառքները Սամսոն կը հանուին։ Երեսուն տարի յառաջ գրուած մի գիրքի նայելով 150 տունի չափ հայ, 1000 տունի չափ Թուրք և 600 տունի չափ յոյն կար, այժմ Թուրք բնակիչների թիւը 2 անգամ, իսկ հայերի և յոյների թիւը $2^1/_2$ անգամ աւելցած է։ Սամսոնի հայերը բնիկ տեղացի չեն, այլ Հայաստանի զանազան քաղաքներէն դաղթած, որովհետև այստեղ ծովեզրեայ քաղաք է և առևտրական դիւրութիւններ կունենայ։ Սակայն վաճառականութիւնը գլխաւորապէս յոյների ձեռն է. հայերը կ ο մ ի ս ի ο ն է ր են ընդհանրապէս, վաճառականութեամբ և արհեստներով զբաղողներ ալ կան։ Սամսոնի օդը վատառողջ է, յաճախ ջերմ կը պատահի։ Հայերը մի եկեղեցի ունեն և մի վարժարան, որ խեղճ վիճակի մէջ է։ Փոքր-Ասիայի գրեթէ ամեն վարժարաններն ալ անմխիթար վիճակի մէջ են։ Բայց պէտք չէ զարմանալ, քանի որ նոյն իսկ Կ. Պոլսի մէջ ալ այդպէս են։ Նուբար-Շահնազարեան վարժարանը Կ. Պոլսի մէջ, որ արժ. Շահնազարեան վարդապետի կոակով և վսեմ. Նուբար փաշայի նպաստներով հիմնուած է, որ Ներսէս պատրիարքին ալ հսկողութեան տակ կը գտնուի, այսօր պարտքի մէջ խղդուած և գ օ ն ս օ լ ի տ է ի անկումին պատճառով մեծամեծ վնասների ենթարկուած և դոցուած է։

Սամսոնի առջև, ուր ծովը յաճախ կալեկոծի և ուր շոգենաւերը ստէպ կերթևեկեն, կառավարութիւնը դեռ մի նաւահանգիստ չէ շինած։

Օգոստոս 24 Սամսունէն մեկնելով, հինգշաբթի օր Ամասիա եկանք և անտի ալ հետևեալ օրը ելնելով, շաբաթ օր Եւդոկիա եկանք։ Թէև ընդհանրապէս 6—7 օր կը տևէ Սամսունէն Եւդոկիա (Թոքաթ) ճանապարհը, բայց մենք չուտ եկանք։ Այս կողմերը ոչ շոգեկառք կայ, ոչ ալ պատրաստուած և շկուած ճանապարհներ, այլ ճանապարհորդը երբեմն հարթ դաշտի վրա կը գտնէ ղինք, երբեմն ալ այնպիսի զառ ի վեր և զառ ի վայր տեղեր, ուր անկարելի է ձիով կամ ջորիով յառաջանալ, այլ պէտք է ձիէն վար իջնել և ոտով քայլել։ Երբեմն այնպիսի նեղ և անհարթ ճանապարհներ կելնեն դէմդ, ուր միայն մի մարդ կարող է անցնիլ և որոյ վրայի կողմը ապառաժներ բարձրացած են, ներքևի կողմն ալ անդունդ կայ։ Թէ ձին կամ մարդը մի քայլ միայն սխալի, անդունդի մէջ կը գտնէ ղինք։ Ջորեպաններն ալ վերջին ծայր տմարդի և կիսավայրենի մարդեր են ընդհանրապէս, որոց համար հայհոյութիւնը աղօթքի նշանակութիւն ունի, և առանց կռիւի գործ չեն տեսներ։ Սոցա ջորիները և ձիերը չարաչար աչխատութեամբ վրանին վերքեր ունեցած են ընդհանրապէս և քիչ անգամ չը պատահեր որ իւրեանց վրա հեծնողները գետինը ձգեն։

Վերջապէս Փոքր-Ասիայի որպէս և բուն Հայաստանի մէջ, ճանապարհորդութիւնը թէև օգտակար և հետաքրքրական է, բայց տժանելի և վրտանգաւոր է։ Այս կողմեր ճանապարհորդողները թէև միշտ երկիւղ կունենան աւազակներէ, բայց այժմ, այդ երկիւղը խիստ չատցած է պատերազմի պատճառով, որովհետև կառավարութիւնը չորս կողմերէն բազմաթիւ զօրքեր կը ժողովէ և մինչև որ այդ ժողված զօրքերը այս լեռներէն Սամսոն կիջցունէ որ Կ. Պոլիս տարուին, ճանապարհին վրա կէսէն աւելին այս լեռները կը փախչեն կը մնան, և ճանապարհորդները կողոպտելով կապրին։ Մեր հետ մինչև Եւդոկիա ոստիկան ուղեկիցներ կը գրտնուէին, որով կրցինք ապահով լինել։ Մի օր ոստիկաններին հետ մի քիչ հեռացած էինք կարաւանէն. ջորապանները բեռներին հետ յետս մնացած էին։ Մի քիւրդ պատահեր ջորեպաններին և հրացանի գնտակ խնդրեր է, բայց երբ նոքա քաջապէս մերժեր են, չէ համարձակեր յարձակել և անցեր գնացեր է։

Այս կողմերը ճանապարհորդը պէտք է որ սպառազէն լինի և իւր հետ ունենայ զէնք շարժող ուղեկիցներ։

Ամասիա այդուէտ և պտղաւէտ քաղաք է, երկու լեռների ստորոտը ձորի մէջ հաստատուած։ Օդը շատ առողջարար չէ և ամառները յաճախ ջերմային հիւանդութիւններ կը լինեն։ Աշխարհագրական լայնութիւնն է 40° 59′ և երկայնութիւնը 33° 4′։

Թուրքերը եռապատիկ թիւով են քան հայերը։ Յոյները շատ սակաւաթիւ են։ Հայերը երեք եկեղեցի և երեք ալ վարժարան ունեն, որոց երեքը մի վարժարան չարժեն։ Այս վիճակի առաջնորդ Եղեսեան եպիսկոպոսը, որ արդէն խարդախութեամբ եպիսկոպոս օծուած է Սիսի հանդուցեալ Կիրակոս կաթողիկոսէն, մի օրինաւոր վարժարան բանալ խոստանալով, եկեղեցիների ծանրաղին անօթները հալած և դրամը վատնած է։ Ժողովուրդը տարիներով կռիւներ հանեց և Խրիմեանի օրով եպիսկոպոսը Կ. Պոլիս տարուեցաւ, բայց յետոյ Ներսէս պատրիարքի օրով դարձեալ Ամասիա եկաւ...

Այս բոլոր երկիրների և Անդրկովկասեան հայերի մէջ անմիջական յարաբերութիւններ անհնարին են, վասն զի փօստային յարաբերութիւններ չը կան Ռուսիայի հետ։

Ամասիայի ժողովուրդը ընդհանրապէս երկրագործութեամբ կը զբաղի և աղքատ վիճակի մէջ է։ Երբ երկրագործութիւն կասեմ, մի կարծէք թէ մեքենաներով, կամ նոր դրութիւններով կաչխատուի, այլ երկրագործութիւնը ինչ վիճակի մէջ որ կը գտնուէր Նոյ նահապետի ատեն, տակաւին նոյն վիճակի մէջ կը գտնուի ցարդ այս կողմեր։ Ամասիայի մէջ Միհրդատի հրաչակերտները կը տեսնուին, որոց վրա Թուրքերը վէպեր շինած են Քեռօղլուի անունով։

Եւդոկիայի մէջ 4000-էն աւելի տուն կը գտնուի, որոնց թիւում 1300 տունի չափ հայ լուսաւորչական, 150 հայ հռոմէական (այս կողմերը հռոմէական հայերը հասունեան են) և 10 տունի չափ բողոքական հայ։ Յոյն և հրէայ ալ կայ, որք սակաւաթիւ են։ Մնացածները Թուրք են, որք գրեթէ կրկնապատիկ աւելի են քան հայերը։ Եւդոկիայի մէջ 4000 ի չափ հոգի հայ կայ, իսկ Եւդոկիայի վիճակին մէջ (Զիլէ, Հերէք, Արդովայի և Գաղովայի գիւղերում բոլոր հայ բնակիչներին միասին հաշուելով) 6000 հայ կելնէ։ Որպէս Փոքր-Ասիայի գրեթէ ամեն տեղերը, նոյնպէս և այս կողմերը հայերը հետզհետէ կը պակսին, որովհետև վերջին ծայր աղքատութիւն տիրած է. տարին հազիւ 100 մանէթ ծախքով ընտանիքներ կապրին։ Կան ալ 50 կամ 60 մանէթով տարին ապրողներ, որք հազիւ քանի մը անգամ մսի երեսը կը տեսնեն։ Գիւղեր կան, որք միայն հողի հետ կը զբաղին և դրամի երեսը տեսած չեն։ Իւրեանց հանած ցորենը և բերքերը արտասահմանի յղելու վաճառելի ոչինչ դիւրութիւն չունեն։ Բերքը անպէտք կը կորչի, վասն զի ծախել չեն կարող։ Բայց այնու ամենայնիւ պարտաւոր են դրամ ունենալ որ տուրք վճարեն կառավարութեանը, և այդ տուրքին պատճառով կը ստիպուին Կ. Պոլիս պանդխտել և այնտեղ ամենացած ծառայութեան մէջ մի քանի փող շահելով, իւրեանց հայրենիքը յղել որ արքունի տուրք վճարեն։ Ես այսպէս կը մակաբերեմ, որ Հայաստանի ամեն կողմեր ալ աչխատասէր և ընդունակ հայեր կը գտնուեն, բայց աղքատութիւնը և թշուառութիւնը այն աստիճան ծանրացած են իւրեանց վրա, որ այդ ծանրութեան տակ թմրեր, եռանդնին ալ մարեր է։ Թէ փոքր ինչ օգնութիւն և յոյս տրուի սոցա, խեղճերը մեծ գործ կը տեսնեն իրենց երկրին վերաբերեալ, վասն զի այդ ճնշուած դրութեան մէջ ալ մեծ հնարագիտութիւն և ընդունակութիւն կը ցուցնեն։ Մի օրինակ պիտի բերեմ այստեղ՝ Եւդոկիայի մէջ մի երիտասարդ տեսայ, որ առանց մի որ և է մեքենայի, ինքնուս կերպով, ձեռքով միայն վեց հարուածեան ատրճանակներ շինած էր երկու երեք հատ։ Այդ ատրճանակները թէև սուղ կելնեն և եւրօպականներին չափ բարեձևութիւն չունեն, բայց մեծ ճշդութիւն, զօրութիւն և հաստատութիւն ունեն։ Եթէ այդ երիտասարդը քաջալերեն, անշուշտ մեծ գործեր կրնար տեսնել իւր արհեստի մէջ։

***

ՆԱՄԱԿ ԲԻՆԿԱՆԻՑ

Օգոստոս 1876.

Քանի մը օր յառաջ Տիւրիկեոյ փօստայով գիր գրած եմք, ուսկէց անշուշտ բաւական հասկցած էք այն բազմատեսակ տառապանքները, զորս Ախուշաղցի Քիւրտ ցեղի երեսէ կը կրեմք. այս վայրագ մարդակերպները որ առաջ սպառնալիքով և կողոպտելով սկսած էին, հիմակ ալ ոտից ցզրխ գինեալ մարդիկներ հանեց դէմերնիս և քանիցս հալածուեցանք հրացանի հարուածներով մեր լեռներէն, հրացանի գնդակները մեր չորս դին սուլելով հասկցուց մեզ որ անտնք մեր կեանքը կուզէին, առաւօտ մը մի հրացանի գնդակ դպաւ Մուրակայենց Աւետիսին, այլ բարեբաղդաբար անվնաս, չորս անգամ եղաւ բողոք բարձինք Ակնայ կառավարութեան այլ մեր բողոքները չը լսեց նա և ոչ իսկ պատասխանի արժանի համարեց, սա ընթացքը զոր կառավարութեան մի քանի կաչառակեր անդամներ կը բռնեն, քաջալերեց այս վայրագ ցեղը և գործը աւելի դառնացուցին։

Ներկայ ամսոյս 24-ի գիշերը քանի մի Ախուշաղցի Քիւրտեր կուգան և գետեղրի վրա եղած կիսաւէր ջաղացքի մէջ կը պահուին, քանի մը անձինք անցէն և անպատրաստ այկիները դացած միջոցնուն, ժամը հինգի առեններք կրակ կընեն ասոնց վրա և ահա մի ողբալի տեսարան կը բացուի. արեան գետակներու մէջ անշնչացած կը տեսնուի իսկոյն Մելոյեան Յովհաննէս 17 տարեկան պատանին, հրացաններու կայծերէն որուն յաչորդեց «հասէք մարդ զարկին» աղաղակները մեծ բաղմութիւն հաւաքեց հոն և սկսանք եղեռնագործներու հետքերը քննել, կօշիկ մը, ատրճանակի կոթի երկաթ մը և դաւազան մը գտանք. ասոնք այնպիսի նշաններ ունէին որոնք այս Ախուշաղցի Քիւրտերու կը վերաբերին, բայց մեք զոր ճանապարհի փոշիներու մէջէն ուսկէց անցած փախած են մէկ ոտքը բաց և այլ երկաթի բեռներով կօշիկի հետքերը տեսանք լուսնի լուսովը որ խիստ պայծառ էր այս միջոցին և տեղ տեղ ալ կրակներ վառելով քննեցինք, այնպէս այս հետքերու հետևելով մինչև Զալթուշի ջրի եզերքը հասանք, ուր թաց հողի վրա մի և նոյն նշանները կային, ինչպէս միւս եզերքի վրա ալ. բայց քիչ մը անդին այս Ախուշաղցիներու օրջերը խիստ մօտ ըլլալով հետազօտութիւն այլ ևս վտանգալի թուեցաւ մեզ, բայց ասոնցմէ ճանապարհի քովերը ուսկէց կանցնէինք ձաճի ըսուած տեղը մեր հովիւները տեղեկութիւն տուին մեզ որ քիչ մը յառաջ գինեալ մարդիկ անցած էին և Քիւրտի կերպարանքով, սապէս Զալթուշի արտերու մէջ կարաան մը տեսանք, որք հաստատեցին մեզ որ քիչ մը յառաջ գինեալ մարդիկ անցած էին որք ճանապարհի վրայէն անցնելով Քիւրտի լեզուաւ կը խօսէին և դէպի Զալթուշի ջուրը կը յառաջանային նոյն երեկոյին Զալթու գիւղը երկու հատ ոստիկանութեան գինուոր գտնուելով, զանոնք ևս բերել տուինք, և մի և նոյն պատմութիւնը լսեցին կարաւանէն և ստուգեցին, ինչ և է ամեն կասկած գրեթէ հաստատուած է որ այս եղեռնագործները Ախուշաղցի աշիրէթէն են, օր առաջ այս ցեղէն անձինքներ իրենց կրօնքի համեմատ շարթ ըրած են Բինկայէն շատ մարդիկ սպաննելու։

Ուստի շատ մարդիկ Տիվրիկ գացին բողոք բառնալու կառավարութեան ինչպէս այս սպանութիւնը դեռ չեղած մի օր յառաջ ալ բողոքուած էր և երկու գինուոր ալ եկած բայց մտիկ ըրած չէին. հիմակ ալ չենք գիտեր թէ կարող պիտի լլլայ կառավարութիւնը զանոնք զսպելու և այս ոճրագործութեան հեղինակները բռնելու, որք հինգ հատ են եղեր։ Արդէն գիտէք որ այս Քիւրտերուն կատաղութիւնը այդ իրենց կեցած տեղերու հողերու աճուրդի դրուած ըլլալուն կառավարութենէն՝ և մեր ալ աւելցնելուն կատաղած են աւելի, մտածեցէք որ ամենուս կեանքն ալ վրտանգի մէջ է և դարձեալ գիշեր ու ցերեկ ցինեալ Քիւրտեր մեր դաշտերը կը շրջին և ոչ ոք կը համարձակվի տան դռնէն դուրս ելլալու, երկրագործները դադրած են վար ու ցան ընելու և ըստ ամենայնի պաչարուած ահ ու դողի մէջ ենք. ժամանակ չը կորսուած մեր փրկութեան ճանապարհը նայեցէք, մեր վիճակն ու ապագան լաւ հասկցուցէք Բ. Դրան և Պատրիարքարանի. գիտէք արդէն թէ ինչ արիւնարբու աւազակներու ցեղէ են այս Քիւրտերը, որոնք հոդերու վրա մի քանի տարիէ հետէ գալէն ի վեր, քանի քանի սպանութիւններ ըրին և գողութիւններ, ամիս չը կայ որ այս ցեղէն մէկը մարդ մը սպաննած ըլլալուն Ակնոյ բանտերը արդիւնուած և չորս օր յառաջ ալ փախած է եղեր անկէ. ինչ և է դուք ալ հոս տեղ, հայր, մայր, զաւակներ և եղբարք ունիք, աչքի առջև առէք անոնց վիճակը, և եթէ անհոգ ըլլաք, գուցէ ձեր այդ սիրելի բինկան շատ չը տեսէր քակ կըլլայ։

(Նորագիր)

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այս համարում տպում ենք «Նորագիր» լրագրից օգոստոս ամսին Բինկանից գրած նամակը, որի մէջ Բինկանի հայերը (նամակի տակ կան 53 ստորագրութիւններ) դանդաղում են Կ. Պոլսի հայերին իրանց թշուառ դրութեան և քիւրդերից կրած հալածանքների մասին։ Ինչ կարգադրութիւն է արել այդ մասին պատրիարքարանը,—մեզ յայտնի չէ։

***

Մեզ խնդրում են յայտնել որ ԹԻՖԼԻՍԻ արուեստաւորների ժողովը արդէն մի քանի չաբաթ է որ բացված է, և ընկերութեան բնակարանում ամեն օր կարելի է չափաւոր գներով սատակ՝ նախաճաշիկ, ճաշ և ընթրիք։ Արուեստաւորների ընկերութիւնը գտնվում է Բարօնսկի փողոցի վրա, Կոնտրօլնի պալատայի դիմաց։

***

Պ. Համազասպ Մամիկոնեան խնդրում է մեզ յայտնել հետևեալը՝ «Լուսանկարչական գիտութեան այժմեան բոլոր նորութիւններ ճշդապէս ձեռք բերելու համար արտասահման էի, այժմ վերադառնալով նորից հիմնեցի լուսանկարչական գործարանս իմ սեփական տան, որ գտնվում է Բարօնսկի փողոցի վրա Խտենդանոցի դիմաց որ այժմ ընդունում եմ լուսանկարչութեան և նկարչութեան վերաբերեալ ամենայն գործեր հանելու և նկարելու, ամենափոքր պատկերներէն սկսած մինչև մարդոյ բնական մեծութեամբ բոլորովին նոր և կատարելագործուած կերպերով, և զանազան լոյսերով, և ստուերներով։ Նոյնպէս վախճանուած մարդկանց փոքր պատկերներից մեծացնել բնական մեծութեամբ և պատրաստել ձիթաներգով բոլորովին կենդանի կերպով. գործակցութեամբ Պետերբուրգի ակադեմիայից ատարած ամենահմուտ նկարիչ գերմանացի պ. Վիլհելմ Ցօնսօնի։ Միայն կը խնդրեմ բնական մեծութեամբ և ձիթաներգով պատրաստուած պատկեր ցանկացողներուն օր առաջ ինձ յայտնեն որ որոշեմ նոցա հանուելու յարմարութեան օրվայ ժամերը։ Ցուսով եմ որ պատուելի հասարակութիւնը առանց ուշադրութեան չը թողու իմ նոր գործարանս։ Արդէն իմ տասն և հինգ ամեայ աչխատութիւնը նոցա համար միշտ գոհացուցիչ է եղած, և այժմ անկասկած եմ որ աւելի ևս պիտի լինի։»

***

«Кавказъ» լրագրի № 125-ի մէջ տպվեցաւ գծի տակ մի յօդված որ հետաքրքիր է հաւաքված հարուստ փաստերի կողմից։ Ռուսաց «Сынъ Отечества» լրագիրը նորերումս անուանել է հայերին армяшки, ասելով թէ հայերը ամենավախկոտ ժողովուրդ են աշխարհիս երեսին։ «Кавказъ» լրագրում տպված և Միքայել Պատկանօվ ստորագրված յօդվածը ապացուցանում է թէ հին հայոց պատմական իրողութիւններով, թէ վերջին դարերի պատմութեան վրա հիմնվելով, որ հայերի մէջ կարելի է պատահել հերոսների, քաջ մարդիկների, պատերազմական բնաւորութիւն ունեցող անձերի, զօրապետների բազմաթիւ անունները։ Թողնենք հին պատմութիւնը։ Բայց այն մարդիկ, որոնք կարծում են թէ հայերը զինուորական յատկութեանից զուրկ, առևտրական ժողովուրդ են, թող յիշեն Բեհբութեանի, Արգուտինսկու, Մաղաթօվի, Լազարեվի, Գրիգոր եպիսկոպոս Մանուչարեանցի, Ներսէս V-ի, և ուրիշ շատերի անունները, որոնք ճակատամարտերի մէջ ոչ թէ միայն հայերին էին ոգևորում, բայց և ռուսաց զօրքին հոգի էին տալիս իրանց անկարգրելի քաջութեամբ և համարձակութեամբ։

***

Ցաւալի լուրեր են հասնում մեզ Վանից։ Այնտեղ դումարված թիւրքաց զօրքը յարձակվում է հայ բնակիչների վրա, ծեծում է, կողոպտում է նրանց։ Գիշեր ժամանակ թիւրք զինուորականները զողութիւններ և աւազակութիւններ են անում։ Վան քաղաքի բնակիչներից շատերը սկսում են փախչել, դաղթել իրանց հայրենիքից։ Եթէ երկու ամսվայ զինադադարման ժամանակ այդ դրութիւնը կը շարունակվի, զինադադարումից յետոյ էլ գրեթէ հայ չի մնայ Հայաստանում։

***

Անդլիական տէրութիւնը առաջարկում է մի եւրօպական կ օ ն գ ր է ս կազմել Կ. Պոլսում, Թիւրքիայի և Բալկանեան թերակղզու սլավօնացիների մէջ խաղաղական պայմանները որոշելու համար։

***

Նոյեմբերի 7-ին սիրողների խումբը Ներսիսեան հին ուսումնարանի դահլիճում մասնակցութեամբ պ. պ. Տէր-Դաւթեանի, Ղարագեօղեանի և Արգարեանի կը ներկայացնէ յօդուտ Հաւլաբարի Ս.

Մարիամեան ուսումնարանի. 1) Այ քեզ օյին և 2) Քաղցածներ։ Պ. Աբգարեանցը զաւէշտի ժամանակ կը նուագէ թառի վերա և Սմբատը կերգէ «Ախ լուսին, լուսին։»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Վրաստանի և Իմերէթի Հայոց վիճակային կոնսիստորիայի Ատենումը նշանակած է աճրդախօսութիւն 8-ին նոյեմբերի սոյն ամի և կրկնաճրդախօսութիւն 11-ին նոյն ամսոյ, կապալաւ տալոյ համար եկեղեցապատկան կալուածները, որոնք են, ա. Վանայ Մայր եկեղեցւոյ պարտքի Հանդէպ գտանեցեալ կըղզին, և բ. Մանիշակի տախտ անուանեալ գերեզմանատեղին։ Պայմանները կարելի է տեսանել կոնսիստորի դիւանատանը ամէն օր առաւօտեան 9 ժամից մինչև մէկն։

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ

ԲԱՌԱՐԱՆ

Ի ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԷ Ի ՀԱՅ

РУССКО АРМЯНСКІЙ СЛОВАРЬ

Աշխատասիրեալ Ի Գաբրիէլէ Երեցփոխեան Նորանոր փոփոխութեամբ և յաւելուածովք ի լոյս ընծայեալ ՅԱՂԷՔ. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

Գինն է 4 ռ. ճանապարհի ծախսով։

—

Միանգամից 20-ից աւելի օրինակ գնողներին լինում է զեղչողութիւն իւրաքանչիւր հատին 50 կոպ.

Վաճառվում է Թիֆլիսում գլխաւորապէս Շահաղելեանցի գրավաճառանոցում, Միխայելովսկի կամուրջ, տուն Միրզոյեանի և նմանապէս բոլոր գրավաճառանոցների մօտ։

Բառարանիս բաժանորդներին Կուզարկուի գիրքը ճեացած երկու ռուբլի ստանալուց յետոյ, իսկ գինը լեովին վճարողներին կուղարկվի դա իսկոյն նոցանից այժմեան հայցէն ստանալուց յետոյ։

„ԱՆԵԿԴՕՏՆԵՐ“

անունով մեր աշխատութեան I հատորը արդէն ծախվում է՝ պ. Զաքարիա Գրիգորեանցի գրավաճառանոցում և մեզ մօտ։ Ճանապարհի ծախսով գինը 50 կոպէկ է։

Մեր հասցէն՝ „Тифлисъ Авлабаръ. Ованесу Назаріанцъ.“

Ց. Նազարեանց

„ԱՆԵԿԴՕՏՆԵՐ“-ի

II հատորը պատրաստելու համար՝ ժողովում ենք մեր կեանքից առնուած անեկդոտներ։ Մեզ անեկդոտներ ուղարկողների ազգանունները կը տպուին գրքի վերջումը և նոցանից իւրաքանչիւրը կը ստանայ մի օրինակ։ Մեր հասցէն՝

„Тифлисъ. Авлабаръ. Ованесу Назаріанцъ.“

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԵՐ ԲՈՒՍԱԿԱՆ ԹԻՆՕԳԼԻՑԵՐԻՆԻ ՊՕՄԱԴԱՑԻՆ

Հաղարներ անձինքներից երկու սեռի իրանց դեղեցիկ մազերով պարտական են միայն արտասահմանում վաճառվող այնպէս անուանված ԲՈՒՍԱԿԱՆ ԹԻՆՕԳԼԻՑԵՐԻՆԻ ՊՕՄԱԴԱՑԻՆ, որ մազերը բուսնել է տալիս։ Այդ պօմադը բժշկական չատ հեղինակութիւններից փորձված է և ունի վկայական թղթեր պ. Կլեչինսկուց որ Վիէննայի Լանդգերիխտի քիմիայի պրոֆէսոր է և նոյնպէս Մոսկվայի բժշկական վարչութեան թոյլատրութիւն։ Նա ունէր մեծ աջողութիւն և վերջին ժամանակ հետազօտած էր Մոսկվայի բժշկական վարչութենից որ տուեց նրան իր հաւանութիւնը։ Կանոնաւոր գործածութեան ժամանակ, մինչև անգամ մազերից մերկ գլուխները ծածկվում լի մազերով։ Այդ պօմադը պնդացնում է կաշին, պահպանում է մազերը թափվելուց, մազերին տալիս է բնական տեսք և փայլունութիւն և իր անուշահոտութեան պատճառով, որ նրա լաւ յատկութիւններից մինն է, կարող է զարդարել ամենաչքեղ տուալէտի սեղանը։ Այդ բոլոր յատկութիւնները իմ արդիւնքի, իրաւունք են տալիս ինձ յուսալ Ռուսաստանումն էլ նրա ընդարձակ տարածման և պատուելի հասարակութենից լաւ ընդունելութեանվրա։

ԳԻՆԸ ՄԻՇԻՇԻ ՀԱՄԱՐ 2 ՌՈՒԲԼ

Իւրաքանչիւր չիշի հետ տրվում է և պօմադի գործածութեան նկարագրութիւնը։

ՊՕՄԱԴ

„PASTA EUGENIE“

Այդ պօմադի հնարող տիկինը որ յայտնվեցաւ «Pasta» անունով, պատիւ ունի յայտնել յարգոյ հասարակութեան որ «Pasta Eugénie» այժմ ստացված է և ծախվում է Թիֆլիսում պ. ԼԱՆԿՕԻ մուզիկային մագազինում, Արծրունու տանը, Վլադիկավկասում պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ Ստավրապօլում պ. ԿՈՒՐԻԼՋԷՆԿՕԻ մօտ, որտեղ ծախվում են և ճեացած այստեղ յիշված տարդիւնքները։ Այդ պօմադը չանաւոր է նորանով, որ նրա գործածութեան կարճ ժամանակից յետոյ երեսը խատակվում է զանազան բիծերից, անմաքրութիւններից և խոցերից և ստանում է երիտասարդական հատակին յատուկ թարմութիւնը և գեղեցկութիւնը։ Առաջարկվում է այն անձանց որք կամենում են խատակ և սպիտակ երեսի գոյնը ստանալ։ Հնարողը երաշխաւոր է պօմադի ներգործութեան հաստատութեան համար։ Դրաւական կարող են լինել առնողները համար և այն վկայաթղթերի որք ստացված են թէ Վիէննայի քիմիքոս պրոֆէսոր պ Կլեչինսկուց, թէ Մոսկվայի բժշկական վարչութեան թոյլատուութիւնը։

ՄԻ ՍՐՈՒԱԿԻ ԳԻՆԸ 1 Ր. 60 Կ.

Որի հետ տրվում է և նրա գործածութեան նկարագրութիւնը։

Իւրաքանչիւր սրուակի վրա ինչպէս մազերի համար, այնպէս «Pasta» գանվում է մի առանձին դրօշմ «Ամուրի» պատկերով և հնարողի ստորագրութեամբ որի վրա առնողներին խնդրումենք ուշադրութիւն դարձնել։

Ց. Դ. «Pasta» պօմադը առաջարկվում է և նոցա, որք թէև չունեն զանազան վերև յիշված կաչու հիւանդութիւններ, բայց կամենում են ունենալ խատակ և թարմ երեսի, վզի և ձեռքերի գոյնը։

ՋԵՌՔԵՐԻ ՊՕՄԱԴ

Այդ պօմադը այնպէս է պատրաստված, որ նրա գործածութենից յետոյ ձեռքերը ստանում են զարմանալի փափկութիւն և սպիտակութիւն։

Սրուակի գինը 1 ր. 30 կոպ.

ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԸ, թէ մոգ խարտեաշ, թէ սև, որ ներկում է 10 րոպէի միջոցում և չէ կորցնում իր ազդեցութիւնը 6 շաբաթվայ ընթացքում։ Արկղիկը 3 բուբլ։

ՏՕԿԱՑԵԱՆ ԲԱԼԶԱՄ, հատատ միջոց կոշտերի և կաչու կոշտութիւնների դէմ. Սրուակը 60 կ.

32 (50)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԵՐ ԲՈՒՍԱԿԱՆ ԹԻՆՕԳԼԻՑԵՐԻՆԻ ՊՕՄԱԴԱՑԻՆ։ Ա. Ն. ԳՕՆԶԱՐՕՎԻՑ։

Գինը մի կտոր 750 քառակուսի մետր մի կտոր 1 ռուբլի։ Ուղարկվում է Թիֆլիսից 80 վերստ հեռաւորութեամբ։ Հարցնել Սուրբ Գրիգորի դպրոցում։ Ամենայն դարմանատեղիներում։

4 (6)

ՖՕՍՖՕՐՈՆԿԻՍԼՈԵ ԺԵԼԵԶՕ

ДОКТОРА ФИЛОСОФІИ ЛЕРА

Въ видѣ жидкости, средство это содержитъ желѣзо и фосфоръ. Это одно изъ самыхъ новѣйшихъ желѣзистыхъ препаратовъ и употребляется по предписаніямъ врачей противъ бѣдной немочи и болѣзней происходящихъ отъ объѣденія крови.

Каждый флаконъ изъ синяго стекла имѣетъ вытисненныя слова: *Phosphate de fer Leras* съ подписью изобрѣтателя вокругъ горлышка. Продается во всѣхъ аптекахъ Россіи. Избѣгать поддѣлокъ.

КАПСЮЛИ ИЗЪ МАТИКО

АПТЕКАРЯ ГРИМО и К°. ВЪ ПАРИЖѢ

Эти капсюли приготовляются изъ эфирнаго масла матико и копайскаго бальзама. Онѣ покрыты клейковинною оболочкою и потому не имѣютъ ни запаха ни вкуса.

Употребляются противъ гонореи.

Каждый флаконъ квадратной формы имѣетъ вокругъ горлышка подпись Grimault et C°. — Продаются во всѣхъ аптекахъ Россіи. Избѣгать поддѣлокъ.

ВЪ ТИФЛИСѢ У ЦУРИНОВА

АՏԱՄՆԱԲՈՅԺ ՎՕԼՖՍՕՆ

Բժշկում է ԱՏԱՄՆԵՐԻ և ծնողի ցաւերը, պօմբում է փտած ատամները ամենանոր միջոցով, որ հնարված է յայտնի Լանդգրիֆ բժշկապետից և կատարում է ամեն տեսակ օպերացիաներ ատամների վերաբերութեամբ։ Դնում է չափաւոր գներով ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ատամներ նոր եղանակով ճգական կաուչուկի վրա չինած, որ ընդունված է վերջին ժամանակները ամերիկական ատամնաբոյժների ընկերութեան մէջ։ Պ. ՎՕԼՖՍՕՆ, որպէս Թիֆլիսի մշտական բնակիչ, երաշխաւոր է իր աշխատանքների լաւ հետևանքների համար։ Նրա բնակարանը գտնվում է ԲԱՐԻԱՏԻՆՍԿԻ փողոցում, Իշխանուհի Թումանովի տանը, Ալէքսանդրեան այգու դիմաց։ Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան 9 ժամից սկսած մինչև 2 կէսօրի, իսկ երեկոյեան 3—6 ժամ։

5 (13)

ՎԻՐԷՍԿԻՎԱՆԻԵ ԻԶ ՄԱՏԻԿՕ

АПТЕКАРЯ ГРИМО и К°. ВЪ ПАРИЖѢ

Вспрыскиваніе это, приготовленное посредствомъ перегонки листьевъ перувіанскаго дерева МАТИКО, употребляется по предписанію врачей противъ гонореи.

Депо во всѣхъ главныхъ аптекахъ Россіи. — Избѣгать поддѣлокъ.

ГУАРАНА ИЗЪ МАТИКО

ГРИМО И КОМП., АПТЕКАРЕЙ ВЪ ПАРИЖѢ.

Средство это, происходящее изъ Бразиліи, извѣстно подъ названіемъ Гуарана или Паулиллинія и употребляется по предписанію врачей противъ мигреня и неврагіи.

Продается въ коробкахъ, содержащихъ каждая дѣвнадцать пріёмъ снабженъ подписью Grimault et C°. Требовать настоящую Гуарану Гримо и К°, потому что есть много поддѣлокъ.

ВЪ ТИФЛИСѢ У ЦУРИНОВА

ԱՄԵՆԱՀԱՍՏԱՏ ՄԻՋՈՑ

ՓՈՔՐ ԵՒ ՄԵԾ ՄԿՆԵՐ, ԽԼՈՒՐԴՆԵՐ ԵՒ ՄԻՋԱՏՆԵՐ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ։ ՐԻՍ ԳՈՒՏՄԱՆ ՔԻՄԻՔՈՍ ՊԷՇՏԻՑ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ

Որ մի քանի արտասահմանեան պալատներից արտօնութիւններ ունի։

Պատիւ ունեմ առաջարկել թէ հասակութեանը, թէ պ. պ. վաճառականներին ինձանից հնարած ամենանոր և մեծ ներգործութիւն ունեցող միջոցներ՝ մկներ, խլուրդներ և ամեն տեսակ միջատներ, ինչպէս օրինակ սև ուտիճ (տարական) ցեց, միջին, բաղնիջ, լու և այլն, ոչնչացնելու համար։ Ցիշեալ միջոցները, որք իմ գիւտերն են և ինձանից պատրաստված են, ստացան կատարեալ հաւանութիւն և յայտնի են ամբողջ Եւրոպայում, որի համար և ունեմ վկայաթղթեր։

Այդ միջոցները արժանացան Մոսկվայի բաղմարվստեան հանդիսում 1872 թ-ին մեծ արծաթեայ մեդալի և Վիէննայի աշխարհահանդիսում 1873 թ. առաջադիմութեան համար մեդալի (Fortschritts—Medaille):

ՀՆԱՐՈՂԸ ԵՐԱՇԽԱՒՈՐ Է ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐ։

Մեծ քանակութեամբ առնողներին զիջումն կը լինի։

ԳՆԵՐԸ՝

Մկների և խլուրդների դէմ գեղը մի սրուակի համար 1 ր. 50 կոպ.։ Փոքրն սև ուտիճների, ցեցի մրջիւնների և լուերի դէմ 1 բուբլ։ Սորա հետ հարկաւոր է առնել և գուտապերչի փոքրիկ մեքենաներ իւրաքանչիւրը 60 կոպ.։

Հեղուկ բաղնիջների դէմ մի սրուակ 1 ր.։

Այդ միջոցը ունի անուշ հոտ, բիծեր չէ անում և յանկարծակի է ներգործում, որի համար երաշխաւոր է գլխաւոր Դէպո։

Հատատ միջոց ԿՈՇՏԵՐԻ և կաչու կոշտութիւնների դէմ, մի սրուակ 60 կոպ.։

Գլխաւոր դեպո ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. ԼԱՆԿՕԻ մուզիկային մագազինում, Դվորցովի փողոցում, Արծրունու տանը։ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍՈՒՄ պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ ՍՏԱՎՐԱՊՕԼՈՒՄ պ. ԿՈՒՐԻԼՋԷՆԿՕԻ մօտ։

Օտարաքաղաքացիները թող բարեհաճեն ճանապարհի ծախսը վճարել յիշեալ միջոցները ուղարկելու համար։ Կարող են թէ փող, թէ փօստի մարկաներով։

32 (50)

Дозволено цензурою 27 Октября 1876 г. Тифлисъ

Типографія Энфіаджіанцъ и К-°

Խմբագիր հրատարակող—ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ